

**1.2.4. Տրանսպորտ**

**Ավտոմոբիլային տրանսպորտ**

**Քեռնափոխադրումներ:** 2010թ. հունվար-սեպտեմբերին, ըստ տնտեսավարող սուբյեկտներից ստացված վիճակագրական հաշվետվությունների տվյալների և չհաշվառվող դաշտի լրահաշվարկի, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 307.5 հազ. տոննա, որը 2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ աճել է 10.8 տոկոսով:

**Քեռնաշրջանառություն:** Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառությունը 2010թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 17263.9 հազ. տոննա-կմ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 12.9 տոկոսով:

**Ուղևորափոխադրումներ:** 2010թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 7638.0 հազ. մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 6725.2 հազ. մարդու դիմաց:

*Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը ըստ շրջանների, 2009-2010թթ. հունվար-սեպտեմբերին*


	2009թ. հունվար-սեպտեմբերին	2010թ. հունվար-սեպտեմբերին	Աճի տեմպը, տոկոսներով
<b>Ընդամենը</b>	<b>6725.2</b>	<b>7638.0</b>	<b>113.6</b>
ք.Ստեփանակերտ	5862.9	6680.9	114.0
Ասկերան	415.3	424.3	102.2
Հաղրուք	32.4	37.8	116.7
Մարտակերտ	74.2	87.3	117.7
Մարտունի	133.6	156.6	117.2
Շահումյան	0.8	1.0	125.0
Շուշի	197.1	239.0	121.3
Քաշաթաղ	8.9	11.1	124.7

**Ուղևորաշրջանառություն:** Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը 2010թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 63483.3 հազ. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 13.6 տոկոսով:

*Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը ըստ շրջանների, 2009-2010թթ. հունվար-սեպտեմբերին*

	2009թ. հունվար-սեպտեմբերին	2010թ. հունվար-սեպտեմբերին	Աճի տեմպը, տոկոսներով
<b>Ընդամենը</b>	<b>55890.4</b>	<b>63483.3</b>	<b>113.6</b>
ք.Ստեփանակերտ	34871.7	38052.8	109.1
Ասկերան	7890.0	9378.8	118.9
Հաղրուք	3764.0	3865.3	102.7
Մարտակերտ	2344.0	2624.0	111.9
Մարտունի	4685.0	6022.4	128.5
Շահումյան	122.7	130.0	105.9
Շուշի	991.0	2147.2	216.7
Քաշաթաղ	1222.0	1262.8	103.3

*Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը ըստ շրջանների, 2010թ. հունվար-սեպտեմբերին*



**Խողովակային տրանսպորտ:** 2010թ. հունվար-սեպտեմբերին խողովակային տրանսպորտով հանրապետությունում ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 19183.4 տոննա՝ 2009թ. հունվար-սեպտեմբերի 17816.6 տոննայի դիմաց:

**Ճանապարհատրանսպորտային պատահարներ:** Հանրապետությունում 2010թ. հունվար-սեպտեմբերին, ըստ ԼԳՀ կառավարության առընթեր ԼԳՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության տվյալների, արձանագրվել է շարժակազմի հետ կապված ճանապարհատրանսպորտային պատահարների 38 դեպք, որից՝ 33-ը տեղի է ունեցել տրանսպորտային միջոցների վարորդների, 3-ը՝ հետիոտների կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման, 2-ը՝ ճանապարհների անբավարար վիճակի:

Ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով 2010թ. հունվար-սեպտեմբերին վիրավորվել է 49 և զոհվել՝ 12 մարդ:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը աճել է 5.6 տոկոսով, զոհվածների թիվը՝ 2.4 անգամ և վիրավորների թիվը՝ 11.4 տոկոսով:

*Ճանապարհատրանսպորտային պատահարների և տուժվածների թիվը, 2010թ. հունվար-սեպտեմբերին*

	Պատահարների քանակը, միավոր		Տուժվել են, մարդ			
	Ընդամենը	այդ թվում՝ հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով	զոհվել են		վիրավորվել են	
			Ընդամենը	այդ թվում՝ հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով	Ընդամենը	այդ թվում՝ հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով
<b>Ընդամենը պատահարներ</b>	<b>38</b>	<b>4</b>	<b>12</b>	<b>2</b>	<b>49</b>	<b>5</b>
<i>այդ թվում՝ ըստ տրանսպորտային միջոցների տեսակների</i>						
Բեռնատար ավտոմեքենաներ	6	1	3	1	7	-
Ավտոբուսներ	-	-	-	-	-	-
Թեթև մարդատար մեքենաներ	31	3	9	1	41	5
Մոտոցիկլետներ	1	-	-	-	1	-

Ճանապարհատրանսպորտային պատահարների մեծամասնությունը տեղի է ունեցել Ստեփանակերտ քաղաքում՝ 47.4 տոկոսը կամ 18 պատահար, որոնց հետևանքով զոհվել է 3 և վիրավորվել՝ 22 մարդ:

*Ճանապարհատրանսպորտային պատահարներն ըստ շրջանների, 2009-2010թթ. հունվար-սեպտեմբերին*

	2009թ. հունվար-սեպտեմբերին			2010թ. հունվար-սեպտեմբերին		
	Պատահարների քանակը, միավոր	Տուժվել են, մարդ		Պատահարների քանակը, միավոր	Տուժվել են, մարդ	
		զոհվել են	վիրավորվել են		զոհվել են	վիրավորվել են
<b>Ընդամենը</b>	<b>36</b>	<b>5</b>	<b>44</b>	<b>38</b>	<b>12</b>	<b>49</b>
ք.Ստեփանակերտ	17	-	18	18	3	22
Ասկերան	5	1	9	8	2	11
Հաղրուք	2	1	2	2	3	4
Մարտակերտ	2	-	2	2	1	1
Մարտունի	4	-	4	4	2	6
Շահումյան	-	-	-	-	-	-
Շուշի	4	3	6	3	1	4
Քաշաթաղ	2	-	3	1	-	1

*Ճանապարհատրանսպորտային պատահարները և տուժվածներն ըստ կատարված*

սլատահարի վայրի և տեսակի, 2010թ. հունվար-սեպտեմբերին

		Պատահարների քանակը, միավոր	տուժվել են, մարդ	
			գոհվել են	վիրավորվել են
ըստ կատարված սլատահարի վայրի	քաղաքներում և բնակավայրերում	21	4	24
	ավտոճանապարհներին	16	8	24
	այլ տեղերում	1	-	1
ըստ տեսակի	բախում	12	7	17
	շրջում	10	3	15
	խոչընդոտի վրաերթ	4	-	4
	հետիոտնի վրաերթ	12	2	13